ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2026 թվականի թիվ 57 –Ա

ԻՐԻՆԱ ՍԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՂԲՅՈՒՐԻ Ս.ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման և բողոքարկման կարգի» 6-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ակնաղբյուրի Ս.Մխիթարյանի անվան հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Իրինա Մխիթարյանի 2026 թվականի մարտի 30-ի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

Իրինա Սևանի Մխիթարյանին 2026 թվականի մարտի 30-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ակնաղբյուրի Ս.Մխիթարյանի անվան հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով տնօրենի ընտրությունը /նշանակումը/:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

2026-03-30 15:28:54 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026թ. մարտի 30
ք.Իջևան